

## ՀՈԳԵԿԱՆԻ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՈՒԼՈԳԻԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՔԵՐԸ

*Ռեշեպնիկով Մ. Մ. (Հոգեվերլուծության արևելասլավոնական ինստիտուտ,  
Սանկտ-Պետերբուրգ, ՌԴ)  
veip@yandex.ru*

*ներկայացման ամս.՝ 16.01.2019*

*գրախոսման ամս.՝ 10.03.2019*

*տպագրության ընդունման ամս.՝ 13.03.2019*

Անցած երկու հազարամյակների ընթացքում հոգեկանի և գիտակցության խնդիրը շարունակում է մնալ ամենախորհրդավոր և դեռևս չլուծված հարցերից մեկը: Քչերը կհիշեն, որ միայն Արիստոտելն էր հոգեկանը համարում մարմնին չպատկանող կառույց: Սակայն այս գաղափարը կարճ կյանք ունեցավ, քանի որ հաջորդ դարերի ընթացքում Հիպոկրատը հայտարարեց, որ բոլոր հոգեկան գործընթացների կենտրոնը գլխուղեղն է: Նույնիսկ այնպիսի հանճարը, ինչպիսին էր Ռենե Դեկարտը, անվերապահորեն հավատաց Հիպոկրատին և վատնեց ամիսներ՝ փորձելով ուղեղի ակոսներում և գալարներում գտնել հիշողությունը և հույզերը: Նույն ճանապարհով են գնացել նաև Ի. Մ. Սեչենովը, Ի. Պ. Պավլովը և այլք: Հետագայում նմանատիպ բազմաթիվ «հեղափոխական» գաղափարներ են ծնվել և մահացել: Ընդ որում, մահացել են ոչ միայն գաղափարները, այլև այն այցելուները, որոնց փորձել են բուժել այդ տեսության հիման վրա ստեղծված մեթոդներով: Այս հողվածում հեղինակի կողմից ուղեղը դիտարկվում է որպես կենսաբանական «ինտերֆեյս», ինչպես նաև հիմնավորվում է հոգեկանի ոչ նյութական տեսությունը, որը հավակնում է լինել հայտնագործություն՝ պահանջելով մարդու մասին գիտությունների մի շարք հիմնական պարադիգմների փոփոխություն:

**Հանգուցային բառեր՝** կենսաբանական ինտերֆեյս, տեղեկատվություն, գլխուղեղ, նյարդեր, հոգեկան, հոգեախտաբանություն, հոգեֆարմակոլոգիա, գլխուղեղի կառույցներ, հոգեկանի կառույցներ:

«Դու երբեք չես լուծի խնդիրը, եթե մտածես այնպես, ինչպես այն ստեղծողները»:  
Ալբերտ Էյնշտեյն

### **Ներածություն: Գաղափարներն ունեն ինքնուրույն կյանք:**

Կլավդիոս Պտղոմեոսի աշխարհակենտրոն համակարգը, ըստ որի Երկիրը գտնվում է տիեզերքի կենտրոնում, իսկ բոլոր երկնային մարմինները պտտվում են դրա շուրջ, ծնվել է II դարում և գերակայել է շուրջ 15 դար: 1530 թ. Ն. Կոպեռնիկոսի կողմից ստեղծվեց աշխարհի հելիոկենտրոն համակարգը, որում

կենտրոնական դիրք զբաղեցնում էր Արեգակը: Այդ գաղափարը շատ ավելի վաղ՝ մ.թ.ա. 4-3 դդ. առաջ էր քաշվել Արիստարք Սամոսացու կողմից, ինչի համար նա մեղադրվեց աստվածներին չհնազանդվելու մեջ և վտարվեց Աթենքից: Նույնը եղավ նաև Ն. Կոպեռնիկոսի հեղափոխական հայտնագործության հետ, քանի որ աշխարհի նոր համակարգի գաղափարը թուլացնում էր եկեղեցու իշխանությունը, որն այդ ժամանակ հանդիսանում էր գիտության գլխավոր ուղղորդողը: Նրան հալածանքից փրկեց միայն իր վաղաժամ մահը, սակայն իր կողմնակիցների հանդեպ հետապնդումը շարունակվեց երկար ժամանակ: 1600թ. Կոպեռնիկոսի ուսմունքը տարածելու համար ինկվիզիցիայի ենթարկվեց գիտնական-վանական Ջորդանո Բրունոն:

Այս պատմական ակնարկը նպատակ ուներ ցույց տալ, որ գաղափարներն ինքնուրույն են, նրանք ծնվում, հասունանում, ծերանում և մեռնում են՝ առավել հաճախ տառապելով և փորձելով վերջին հույսը դնել հեղինակավոր և հզոր կողմնակիցների վրա: Բայց նույնիսկ մահացող գաղափարներն ունեն հսկայական ուժ և կարող են սպանել ոչ միայն այլ գաղափարների, այլ նաև մարդկանց: Ընդ որում, ի հակադրություն, օրինակ, աստղագիտության, գենետիկայի կամ հոգեվերլուծության, որտեղ նորարար գիտնականները ենթարկվում են քննադատության կամ «մահապատժի», բժշկության ոլորտում գաղափարները կարող են ոչ միայն ոչնչացնել նոր գաղափարների քարոզիչներին, այլև հազարավոր անմեղ հիվանդների: Այս մասին ավելի մանրամասն կքննարկվի ստորև:

**«Տեսության բեռ»:** Ժամանակակից գիտության մեջ բնության երևույթների վերաբերյալ հնացած պատկերացումները ստացել են «տեսության բեռ» անվանումը, որն ազդում է ոչ միայն փաստերի մեկնաբանման, այլև նոր գիտափորձերի պլանավորման վրա, որոնք ի սկզբանե մշակված են լինում հին տեսության հիման վրա: Նման հետազոտությունները ոչ միայն հաստատում են այդ սխալ պատկերացումները, այլև հիմք են ծառայում տեսական նոր սխեմաների և ոչ մի հեռանկար չունեցող բազմահազար գիտական մշակումների:

Տեղեկատվական ժամանակաշրջանում հասարակական կյանքի բոլոր ոլորտների համար ամենակարևորը դառնում են հոգեկանի մասին գաղափարներն ու պատկերացումները, որոնք էլ ուղղակիորեն ազդում են փիլիսոփայության, սոցիոլոգիայի, քաղաքագիտության, սոմատիկ բժշկության, հոգեբուժության, հոգեբանության զարգացման, ինչպես նաև տեղեկատվական պայթյունի, բարձր տեխնոլոգիաների սուբյեկտների, «ուղեղի վլացման», արհեստական ինտելեկտի և այլ հիմնահարցերի լուծման վրա:

Հատկապես անհրաժեշտ է ընդգծել բարձր տեխնոլոգիաների սուբյեկտների (ատոմակայանների, բալիստիկ հրթիռային կայանների, ամբարտակների օպերատորների) դերը, որոնց պատահական կամ նույնիսկ դիտավորյալ սխալները և գործողությունները կարող են կործանել մի քանի տասնյակ կամ նույնիսկ միլիոնավոր կյանքեր: Օրինակ, հայտնի է օդանավերի օգտագործմամբ օդաչուների կանխամտածված ինքնասպանության առնվազն 9 դեպք:

Վերջին տարիների ամենահայտնի օրինակներից մեկը 2015 թ. մարտի 24-ին Ֆրանսիայում տեղի ունեցած ինքնաթիռի վթարն է, երբ դեպրեսիայով տառապող (երկար տարիներ հոգեբույժի կողմից հոգեֆարմակոլոգիական բուժում ստացած) անձը որոշեց դիմել ինքնասպանության՝ իր հետ տանելով 144 ուղևոր և անձնակազմի 6 անդամ: Նախորդ հրապարակումներում [19, 20], վերլուծելով տարիներ շարունակ հիվանդների կողմից կատարված բազմաթիվ նմանատիպ հանցագործություններ, բազմիցս քննարկել են հետևյալ հարցը. «Ի՞նչ ենք մենք բուժում, և բուժում ենք, արդյոք»:

**Հասկացությունների նենգափոխում:** Վերջին երկու հազարամյակների ընթացքում հոգեկանի խնդիրը լուծվել է Հիպոկրատի տեսության հիման վրա, համաձայն որի ուղեղը բոլոր մտավոր գործընթացներ կենտրոնն է: Հիպոկրատի գաղափարախոսության հետևորդներն են հեղինակավոր գիտնականներ Ռ. դեկարտը [4], Վ. Վունդտը [6], Ի. Մ. Սեչենովը [22], Ի. Պ. Պավլովը [17] և այլն: Հետագայում Հիպոկրատի տեսությունը ձեռք է բերել գերիշխող կարգավիճակ և անընդհատ ճշգրտվել է: Հոգեկանը որոնել են գլխուղեղի կեղևում, ենթակեղևում, պայմանական ռեֆլեքսների, գլխուղեղի էլեկտրական, ալիքային և քվանտային գործունեության մեջ և այլն, [1, 10, 16, և ուրիշներ] և, վերջապես «գտել են» սինապտիկ ճեղքում:

Չարմանալի է նորաթուփ վարկածների և կեղծ հայտնագործությունների՝ թերապևտիկ սխեմաների մեջ ներդրման արագությունը: 1969 թ. «Lancet» ամսագրում լույս տեսավ ռուս գիտնական Ի.Պ. Լապինի հրապարակումը [28], որի համաձայն դեպրեսիան ունի սերոտոնինային բնույթ և կապված է սինապտիկ ճեղքում միջնորդանյութերի փոխանակման գործընթացի հետ: Այս վարկածը արագորեն հաստատվեց փորձարարական ճանապարհով, գործարկվեցին մեծ քանակությամբ քիմիական գործարաններ, որոնք զբաղվում էին գրեթե բոլոր հոգեկան խանգարումները բուժող դեղամիջոցների՝ «սերոտոնինի հակադարձ գրավման սելեկտիվ ինհիբիտորների» արտադրությամբ: Այդ ժամանակից ի վեր, շատ հոգեախտաբաններ «բուժում են» դեպրեսիան (ժամանակակից հոգեախտաբանության առաջատար ձևերից առաջատարը) այս դեղախմբի օգնությամբ՝ որոշ դեպքերում առանց հաշվի առնելու հիվանդության պատճառները և ծագումը, ինչպես նաև առանց դիմելու զուգակցվող հոգեթերապիայի:

Ոչ ոք նույնիսկ չէր կարծում, որ այս չափազանց հիմար մոտեցման մեջ կան ցինիզմի և անգամ սրբապղծության որոշակի տարրեր: Նշանակելով դեղորայք 6-8 ամիս ժամանակահատվածով կամ մինչև կյանքի վերջ (շաքարային դիաբետի օրինակով), բժիշկները կարծես համոզել են քիչ տեղեկացված հասարակությանը՝ ասելով, որ դեպրեսիան հրահրվել է ոչ թե սիրելի մարդու, նյութական կամ սոցիալական կարգավիճակի, իդեալների կամ կյանքի իմաստի կորստով, այլ պարզապես հաղորդիչ միջնորդանյութերի խանգարման հետևանքով:

Անգամ զարմանալի է, որ երկու հազար տարվա ընթացքում գիտնականները չեն նկատել այդ հասկացությունների փոխարինումը. նրանք խոսում էին հոգեկանի ուսումնասիրման կամ թերապիայի մասին, սակայն «բուժում էին» ուղեղը՝ զուգահեռ մշակելով պսևդո-ֆիզիոլոգիական եւ պսևդո-հոգեբանական տերմինաբանություն, որով նկարագրում էին «հոգեկան գործընթացների ուղեղային մեխանիզմները»:

Մի փոքր առաջ անցնելով՝ փորձենք բացատրել այս թյուրիմացությունը: Նույն հաջողությամբ կարելի է պնդել, որ համակարգչի աշխատանքում ամենակարևորը ստեղնաշարն է, էկրանը և էլեկտրոնային բլուկերը՝ մոռանալով ծրագրային ապահովման (Software) մասին: Այնուհետև, էկրանի և ստեղնաշարի (տեղեկատվության մուտքագրման եւ ընթերցման արտաքին ինտերֆեյսի), ինչպես նաև ապարատային մասի լարման և հակազդման ուսումնասիրության հիման վրա՝ փորձում են նկարագրել, թե ինչ ծրագրեր են աշխատում, ինչ են դրանք անում, ինչ խախտումներ կարող են տեղի ունենալ ծրագրերում և որ վիրուսներն են խախտում այդ գործունեությունը: Դա, կարծես, հասկանալի է ցանկացած բանական մարդու: Այդուհանդերձ, մինչև վերջերս մեծ տարածում էին գտել էլեկտրաէնցեֆալոգրաֆիայի միջոցով մտքերի բացահայտման և «մտքի ճանաչման» համակարգչային նեյրովիզուացիայի մեթոդները: Այս գաղափարների միակ պատմական անալոգն է Վ. Լենինի հանճարեղության նյութական հիմքի՝ ուղեղի անատոմիական պրեպարատների ուսումնասիրման ինստիտուտը: Բնականաբար, հեղինակը չի մերժում այն հայտնագործությունները, որոնք արվել են զուգահեռ այդ հետազոտություններին, բայց ևս մեկ անգամ ընդգծում է դրանց հիմքում ընկած գաղափարի անհեռանկար լինելը:

**Հոգեկանի ոչ նյութական տեսությունը:** Հեղինակի [21, 30-32] կողմից առաջադրած վարկածի հետագա զարգացումը կապված էր մեկ կարևոր դիրքորոշման հետ, որը երկար ժամանակ հոգեբանների, ֆիզիոլոգների եւ հոգեբույժների ուշադրությունից դուրս էր և հաշվի չէր առնվել իրենց տեսություններում: Ժամանակակից ակադեմիական գիտությունը դիտարկում է տեղեկատվությունը որպես ոչ նյութական գործոն: Հիշեցնեմ, որ դեռևս կիբեռնետիկայի հիմնադիր Ն. Վինները հիմնավորում էր, որ տեղեկատվությունը ոչ թե մատերիա կամ էներգիա է, տեղեկատվությունը հենց տեղեկատվություն է [5]: Որոշ ժամանակ անց այս միտքը դարձավ ակադեմիական գիտության ընդունված փաստ: Նյութական են միայն տեղեկատվության կրողները (կենսաբանական, թղթային, էլեկտրոնային և այլն): Պետք է խոստովանենք, որ Ն. Վինների սահմանումը լավագույններից չէ: Ավելի ճիշտ կլինի ասել, որ տեղեկատվությունը կատարյալի (մենք կվերադառնանք այս տերմինին հոդվածի վերջում) դասակարգերին պատկանող կառույց է):

Այնուամենայնիվ, լինելով ոչ նյութական, ցանկացած տեղեկատվություն ձեռք է բերում (հենց ձեռք է բերում, այլ ոչ ունի ի սկզբանե) մի շարք քանակական և որակական բնութագրեր: Այն կարող է լինել չեզոք, հուզական

հագեցված, վախեցնող, ճշմարիտ, կեղծ եւ այլն, բայց բոլոր այդ հատկանիշները առկա են միայն այն ժամանակ, երբ կա տեղեկատվության ընկալման սուբյեկտ, և նույն տեղեկատվությունը կարող է տարբեր հոգեկան ռեակցիաներ առաջացնել (օրինակ՝ 2001 թ. սեպտեմբերի 11-ը ԱՄՆ-ում որպես սուզ է ընկալվում, իսկ Լիբիայում՝ որպես խանդավառություն):

Սուբյեկտից դուրս կամ սուբյեկտի բացակայության դեպքում չի կարող գոյություն ունենալ տեղեկատվության առկայություն դրա ցանկացած կրողի վրա: Միայն կենդանի էակները (դրանց և ամենաբարձր աստիճանը՝ մարդը) կարող են միաժամանակ լինել ընկալման սուբյեկտ, ինչպես նաև ոչ նյութական տեղեկատվության արտադրող, կրող, պահպանող և հաստատող:

**Գիտական ճշմարտություններն աղավաղող մոլորությունները:** Ուղեղի՝ որպես բոլոր հոգեկան գործառույթների կենտրոնի մասին արմատավորված գաղափարները հանգեցրին մի շարք սխալ պատկերացումների, որոնք առօրյա խոսքում վաղուց էին ընդգրկվել, իսկ գիտության մեջ հանգեցրել էին «տեսության բեռնման» հայտնի երևույթին (երբ գերակայող տեսությունից դուրս գտնվող ամեն բան արտամղվում է): Սովորական էին դարձել, օրինակ, հետևյալ արտահայտությունները. «ինչ-որ մեկի նյարդերի հետ ամեն ինչ նորմալ չէ», չնայած որ նյարդերը պարզապես հաղորդիչներ են, մեկ այլ տարբերակ՝ «գլխիս եկավ», բայց գալիս է «մտքին» և այլն: Ընդհանուր առմամբ, ամենօրյա և նույնիսկ գիտական մակարդակով նյարդայինի և հոգեկանի նույնականացումը չափազանց մեծ է: Զարմանալով եմ կարդում ժամանակակից ֆիզիոլոգների, հոգեբանների և հոգեբույժների աշխատանքները, որտեղ հաճախ են հանդիպում «ուղեղն ուշացավ», «ուղեղը տվեց հրամանը», «ուղեղը վերլուծեց» և այլն: Ընդհանրապես, «մարդը ուղեղով է մտածում» արտահայտությունը այնքան ծիծաղելի է հնչում, որքան որ «մենք ողնաշարով ենք քայլում»՝ ենթադրելով, որ բոլոր շարժիչ ազդակները անցնում են այս մակարդակով:

Մեկ անգամ ևս դիմենք մետաֆորիկ բացատրությանը. համակարգիչը ոչինչ չի հիշում, գտնում, հաշվում կամ վերլուծում: Այս ամենն իրականացնում է ոչ նյութական ծրագրային ապահովումը, առանց որի համակարգիչը պարզապես սարքավորում է: Նույն կերպ, ուղեղը (առանց հասարակության ազդեցության տակ ձևավորված հոգեկանի) պարզապես կենսաբանական նյութ է (ամենալայն մոտեցմամբ՝ ոչ ավելին, քան սինապսներ, քիմիական միջնորդանյութեր, նյարդային կենտրոններ և նյարդային ազդակների հաղորդիչներ):

Մարդու մասին բոլոր ժամանակակից գիտությունները չեն նկատում նյարդային համակարգի և հոգեկանի միջև գոյություն ունեցող հիմնական տարբերությունները: Դրանք մի քանիսն են, որոնցից ամենակարևորը հետևյալն է՝ առողջ հոգեկանը կարող է տարբերակել երևակայական խթանները իրականից: Նյարդային համակարգը երկու դեպքում էլ կարող է հակազդել միևնույն ձևով: Դրա վրա են հիմնվում բոլոր ներազդման և ինքնաներշնչման

մեթոդները, երբ օրինակ, ձեռքը տաք ջրի մեջ ընկղմելու պատկերացման հետ միաժամանակ բարձրանում է ձեռքի մաշկի ջերմաստիճանը, իսկ 100 մետր արագությամբ սարինտերական վազքի պատկերացումը անմիջապես արագացնում է սրտի աշխատանքը:

Սակայն, հոգեթերապեւտներից բացի շատ քչերն են հաշվի առնում, որ որոշ դեպքերում հոգեսոմատիկ պաթոլոգիան, որն առաջանում է կոնկրետ անձի անհատական սիմվոլիզացիայի համակարգի հիման վրա, զարգանում է նույն սցենարով (մեր տերմինաբանության մեջ՝ «ներքին հոգեկան ծրագրավորում»): Այն, ինչ սրտին մոտ է ընդունվել, կարտահայտվի սրտի պաթոլոգիայով, վիրավորանքը, որը «կույ չի գնացել», ազդելու է կլման ակտի վրա՝ կամ բուլիմիայի կամ անորեքսիայի ձևով, նորությունը, որը շնչակտուր է արել, կարող է արտահայտվել ասթմատիկ նոպաների ձևով. այն, ինչից «ոտքերը դողացել են» կհանգեցնի հոդերի ցավի: Ընդհանուր առմամբ, հոգեկան տրավմաների սիմվոլիզացիայի անհատական համակարգը հանդես է գալիս որպես բազմակի իմպերատիվ ներշնչում (ինքնաներշնչում): Կարելի է համաձայնել կամ ոչ, բայց կարծում եմ, որ նույնիսկ հոգեթերապիայից և հոգեբանությունից հեռու մարդիկ, բազմիցս նկատել են, թե ինչպես է հանկարծակի հայտնված «անտանելի հոգեբանական բեռը» (տեղեկատվությունը) անմիջապես «թեքում է» ողնաշարը: Այստեղ նպատակահարմար է վերհիշել Ժ. Շարկոյի փորձերը՝ ներշնչված պարալիչների վերաբերյալ, երբ հիվանդի ձեռքը անզգայանում էր դրա նյարդավորման հատվածին ոչ համապատասխան գոտու վրա ազդեցությունից, երբ ոչ թե կոնկրետ նյարդային հատվածն է տուժում, այլ ամբողջ ձեռքը, ինչպես հիվանդի պատկերացումներում: Տարօրինակ է, բայց ոչ Ժ. Շարկոն, ոչ էլ Ջ.Ֆրեյդը (ովքեր ականատես էին փորձերին) չեն հանգել այն եզրակացությանը, որ ոչ թե նյարդային համակարգն է վերահսկում հոգեկանին, այլ հակառակը:

**Լրացուցիչ փաստեր, որոնք հաստատում են հեղինակի տեսությունը:**

Ներկայացնենք մի քանի լրացուցիչ փաստարկ, որոնք վկայում են վերոնշյալ տեսության ճշմարտացիության օգտին: Ֆերրալ («Մաուզլի») երեխաների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առանց վաղաժամ սոցիալական միջավայրում ներառվելու (կամ, ինչպես արդեն նշվել է, սոցիալական միջավայրի կողմից երեխայի ուղեղի լեզվական ծրագրավորման բացակայության դեպքում) նորմալ մարդկային հոգեկան չի զարգանում [14, 18]: Ահա թե ինչու գիտության ոլորտում նման անհատներին կոչեցին լատիներեն «feralis», որը նշանակում է «մեռած» կամ «ողջ-ողջ թաղված» (սոցիալական իմաստով), քանի որ նրանք, անշուշտ, պատկանում են հոմինիդ և մարդու ցեղին, բայց չեն հանդիսանում Homo Sapience.

Այնուամենայնիվ, նման երեխաները յուրացրել են կենդանիներին բնորոշ հաղորդակցության ձևերը («լեզու»), որտեղ նրանց հաջողվել է գոյատևել: Սա թույլ է տալիս եզրակացնել, որ առողջ գլխուղեղի առկայությունը անհրաժեշտ,

բայց ոչ բավարար պայման է մարդկային հոգեկանի ձևավորման և գործարկման համար. անհրաժեշտ է սոցիալական միջավայրում ներգրավում և հոգեկանի լեզվական ծրագրավորում: Այս երեխաների մասին գոյություն ունեն շատ կիսաառասպելաբանական պատմություններ, ինչպես նաև տարբեր փորձեր՝ երեխայի զարգացման գործում խոսքային հաղորդակցության դերը հաստատելու համար: Ամենադաժան գիտափորձը վերագրվում է գերմանական թագավոր Ֆրեդերիկ II- ին (մ.թ. 13-րդ դար), որը մի քանի նորածիններ է դրել իր ամրոցի նկուղում, ամբողջական ձայնային մեկուսացման մեջ, խուլ և համր խնամակալների հետ: Թագավորը ցանկանում էր այս ձևով պարզել, թե երեխաները ինչ լեզվով են խոսելու. եբրայերեն, հունարեն, լատիներեն, թե իրենց ծնողների լեզվով: Բայց երեխաները հերթով սկսեցին հիվանդանալ և մահանալ: Բնականաբար, 13-րդ դ. վանական Սալիմբենե դե Ադամի «Ժամանակագրություն» գրքում նկարագրված այս պատմության իսկությունը դժվար է ստուգել:

Գիտական գրականությունում մանրամասն նկարագրված են դեպքեր, որոնցում ֆերրալ երեխաները կարող են շփվել միայն գայլերի կամ շների, նույնիսկ միայն թռչունների լեզվով (նկարագրված է նաև դեպք, երբ ծնողական խնամքից զուրկ երեխան շրջապատված է եղել թութակներով): Ինչպես նշվել էր ֆերրալ երեխաների խնդիրներին վերաբերող հրապարակումներում [34], կենդանիների շրջապատում երկար լինելու ընթացքում նրանք ամբողջությամբ ընդունում էին իրենց «խորթ ծնողների» սովորությունները, որոնք չենթակվեցին ուղղման՝ չնայած հոգեբանների և վերականգնող-բժիշկների բոլոր ջանքերին:

Մեծ իրարանցում առաջացրեց 1992 թ. մի դեպք, երբ մինչ այդ նորմալ զարգացած և հարբեցող ծնողների պատճառով շան խնամքին թողնված երեխան ապրել է մինչև 7 տարեկան: Երեխան շատ արագ սովորեց ոչ թե ուտել և խմել, այլ լափել սնունդը, գրեթե կորցրեց խոսքի արդեն ձևավորված հմտությունները, սկսեց ոռնալ, հաչալ և ուղիղ քայլելուց կրկին անցավ չորեքթաթ տեղաշարժվելուն: Պատկան մարմինները երեխային տեղավորեցին զարգացման թերություններ ունեցող երեխաների համար նախատեսված գիշերօթիկ հաստատություն: Բժիշկների և հոգեբանների դիտարկման ընթացքում Օքսանայի անձնական քարտում նշվում էր, որ նա քայլում է բացառապես «չորեքթաթ», կարող է շատ բարձր ցատկել, օրինակ, սեղանի վրա, մարդկանց մոտ չթողնել, ատամներ ցույց տալ, գոմռալ կամ փորձել կծել: Խոսքի պարզունակ արտահայտությունների ըմբռնումը մասամբ պահպանվել էր, բայց ինքը՝ աղջիկը չէր խոսում: Նա հաճախ էր փախչում գիշերօթիկ դպրոցից և Ժամանակ անցկացնում շների շրջապատում, որոնց հետ նա իրեն նույնակա-նացնում էր:

Սա թույլ է տալիս ենթադրել, որ հոգեկանի բաղադրիչները և մշակույթն ամբողջությամբ չափազանց փխրուն են: Այս տեսանկյունից՝ տարբեր ենթա-մշակույթների և դարերով արգելված երևույթների հանդեպ հանդուրժողա-

կանության բարձրացման ներկայիս միտումը պահանջում է ավելի զգույշ վերաբերմունք:

**Լրացուցիչ փաստերի երկրորդ խումբը:** Ուշադրության է արժանի Ա. Ռ. Լուրիայի «Փոքր գիրք մեծ հիշողության մասին» աշխատությունը [15]: Այս գրքում նա նկարագրել է մասնագիտությամբ լրագրող Ս. Վ. Շերեշևսկու «մենմոնիստ»-ին, որի մոտ շուրջ 30 տարի առկա էր մոռանալու անկարողության պաթոլոգիա: Այս գրքի Ամերիկյան հրատարակության նախաբանում 1965թ. Զ. Բրուները հարգանքի տուրք է մատուցում հեղինակի գիտական կանխատեսմանը և Ա. Ռ. Լուրիային անվանում «ապագայից եկած»: Ա. Ռ. Լուրիան հստակ հիմնավորեց, որ հոգեկանը գործում է որպես ժամանակակից տեսաձայնագրիչ (որն այդ ժամանակ դեռ գոյություն չունեի). այն ամենը, ինչը մարդը երբևէ տեսել կամ լսել է, պահպանվում է: Ի դեպ, գիրքն ունի հեղինակային ենթաբաժին՝ «Մենմոնիստի ուղեղը»: Ոչ բոլորն են ուշադրություն դարձնում դրան, բայց այդ ենթազխով Ա. Ռ. Լուրիան ընդգծեց իր գրքի հիմնական գաղափարներից մեկը. խոսքը ոչ թե «մենմոնիստի ուղեղի» մասին է, այլ հենց «մտքի» (հոգեկանի): Պետք է նշել, որ հոգեվերլուծության հիմնադիրն ինքն էլ երբեք իր աշխատանքներում չի օգտագործել «եկավ ուղեղիս» արտահայտությունը՝ նա գրել է. «մտքիս եկավ»:

Նույնիսկ տասնյակ տարիներ անց Ս. Վ. Շերեշևսկին կարող էր ամենայն մանրամասնությամբ նկարագրել, թե ինչ տեսք ուներ կաբինետը, կամ, օրինակ, առաջին հանդիպման ժամանակ ինչ կար Ա. Ռ. Լուրիայի սեղանին: Ընդ որում, եթե Լուրիան խնդրում էր ավելի մանրամասն նկարագրել ինչ-որ բան, Շերեշևսկին փակում էր աչքերը և ասում, որ «կպտավի սեղանի շուրջ ու կնայի», կարծես, միացնելով լրացուցիչ շարժական «տեսախցիկի» ձայնագրությունը (որը նույնպես այդ ժամանակ չկար): Օտտո Պետցլը ենթաշեմային (պաշտպանական) ընկալման [7, 8] դասագրքային փորձերի վրա հիմնավորեց, որ աչքը տեսնում է, իսկ ականջը լսում է ավելի շատ, քան մենք կարող ենք գիտակցաբար ընկալել, և այդպիսով ենթաշեմային ազդակները կարող են որոշել գնահատող դատողությունների, գաղափարների, դիրքորոշումների և որոշումների կայացումը: Բայց մենք դեռ քիչ բան գիտենք հոգեկանի խորքային այլ կառույցների պարունակության մասին:

Հոգեկանի ինֆորմացիոն տեսության օգտին վկայող մեկ այլ գործոն են Գ. Ռիզոլատիի՝ «հայելային նեյրոնների վրայով» հետազոտությունները [31-33]: Առօրյա կյանքում հաճախ է հանդիպում, երբ երկու մարդ (հատկապես իրար լավ ճանաչող) միջանձնային հաղորդակցության ընթացքում հանկարծակի հիշում են նույն անունները, գաղափարները կամ արտաբերում են նույն խոսքերը: Հետագայում հատուկ հոգեֆիզիոլոգիական փորձերի արդյունքում, որոնք սկզբում անցկացվել են կապիկների, ապա՝ մարդկանց վրա, Գ. Ռիզոլատին փորձարարական ճանապարհով հիմնավորեց հայելային նեյրոնների գոյությունը: Նա չափազանց զգույշ է իր ձևակերպումներում և եզրակա-



ցություններում, այնուամենայնիվ նա նշում է, որ հայելային նեյրոնների շնորհիվ է, որ մարդիկ հասկանում են այլ մարդկանց գործողությունները և նույնիսկ չարտաբերված մտադրությունները, նաև դրանց պատճառները: Այս գաղափարը կարող է ավելի կոնկրետ ձևակերպվել՝ նեյրոնները հանդես են գալիս որպես տեղեկատվություն հաղորդող «կայաններ», և միաժամանակ կարող են ստանալ ոչ խոսքային (մտավոր) տեղեկատվություն՝ որպես «ընդունիչ», որտեղ որոշ դեպքերում ոչ նյութական տեղեկատվությունը վերածվում է ռադիոալիքների նման ինչ-որ երևույթի, իսկ որոշ դեպքերում՝ հակառակը:

Ենթադրում եմ, որ այս տեսակի «փոխըմբռնումը» կենդանիների խմբում հաղորդակցության հիմքն է: Բազմակի անգամ դիտելով, օրինակ, առյուծների որսի տեսագրությունները, ես բացատրություն չեմ գտնում, թե ինչպես 4-5 առյուծները «համաձայնության» են գալիս, թե ովքեր պետք է որսին շրջափակեն ձախ կողմից, ովքեր՝ աջ, ովքեր են լինելու որպես դարանակալ, և ավելին՝ որտեղ է կատարվելու հարձակումը:

Ներկայացնենք տեսությունը հաստատող ևս մեկ կլինիկական դիտարկում, երբ մայրենի լեզվով խոսելու ունակությունը կորցրած այցելուն հեշտությամբ կոնտակտ է հաստատել թերապևտի հետ այլ լեզվով, այսինքն, մտավոր գործունեության մեկ ծրագիրն անջատվելով՝ միանում է մյուսը: Առաջին նման դեպքը, ինչպես հայտնի է, նկարագրվել է Զ. Ֆրեյդի կողմից 1895թ. [24]՝ հիստերիայի ուսումնասիրության ժամանակ:

**Հանճարեղ գաղափարներ և սխալներ:** Ավարտելով այս նյութի շարադրումը, անխոս, չի կարելի չհիշատակել Ի. Պ. Պավլովի հանճարեղ գաղափարը երկրորդ ազդանշանային համակարգի մասին: Հիշեցնենք, որ առաջին ազդանշանային համակարգը, որը իրականանում է ռեֆլեկտորային գործունեության և գլխուղեղի մեխանիզմների հիման վրա, ընդհանուր է համարվում մեր բոլորի համար (գենետիկորեն տրված), կապվում էր Ի. Պ. Պավլովի բացահայտած ենթակեղևային գոյացության հետ: Իսկ երկրորդ ազդանշանային համակարգը, մեկնաբանվում էր որպես գլխուղեղի կեղևի ասոցիատիվ դաշտերի և մեծ կիսագնդերի ազդակների ազդակի (բառեր) դրսևորում, ինչը Պավլովը սահմանեց որպես բարձրագույն նյարդային գործունեություն:

Պավլովը իր հետազոտությունների և ընդհանրացումների սկզբնաշրջանում ուներ խիստ ֆիզիոլոգիական դիրքորոշում, և աշխատանքից ազատելու վախի ներքո արգելում էր իր աշխատակիցներին հոգեբանականացնել իր փորձը պայմանական ռեֆլեքսների վերաբերյալ: Նա հրամայում էր ուղղակի օգտագործել այնպիսի բառեր, ինչպիսիք են օրինակ՝ «շունը գլխի ընկավ», «ցանկացավ», «փոշմանեց»: Սակայն հետագայում ռեֆլեքսների մասին աշխատությունները տեղափոխվեցին ամբողջ հոգեկանի վրա, ինչի համար պարտական ենք ակադեմիկոսի հետևորդներին: Համենայն դեպս, հենց ինքը՝ Պավլովն արտահայտել է իր ենթադրությունն այն մասին, որ ռեֆլեքսները միավորվում են և բնորոշվում որպես ֆիզիոլոգիական և հոգեբանական: Այդ

գաղափարը հանրայնացվել և ամրապնդվել է գիտական հանրությունում արդեն առանց նրա: Դա, իհարկե, հանճարի սխալն էր. ռեֆլեքսում հոգեկանն ավելի շատ չէ, քան լամպի մեջ: Սակայն Պավլովի և նրա հետևորդների հեղինակության ներքո, դեռևս շատ երիտասարդ գիտնականներ փորձում են գլխուղեղի կեղևում և մեծ կիսագնդերում գտնել հոգեկանի նյութական սուբստրատ կամ նրա էլեկտրական և ավիքային էկվիվալենտները: Ցավոք դա անօգուտ է, այնտեղ ոչ մի նյութական բան չկա:

Պավլովի տեսությունը դեռևս մեծ ազդեցություն ունի կլինիկական հոգեբուժության և գիտական հոգեբանության վրա: Սակայն տեղին է նշել, որ հանճարեղ գիտնականը միշտ փորձում էր մնալ ակադեմիական ֆիզիոլոգիայի դիրքերում և կյանքի վերջին շրջանում համեստորեն նշել է. «Ես կլինիցիստ չեմ, ես միշտ եղել եմ և կմնամ ֆիզիոլոգ, և իհարկե, հիմա արդեն ուշ է դառնալ կլինիցիստ» [17; էջ 349]: Պավլովն արտահայտել է ևս մեկ միտք. «Կուզեի կանխել թյուրըմբռնումն իմ վերաբերյալ: Ես չեմ ժխտում հոգեբանությունը՝ որպես մարդու ներաշխարհի բացահայտում: Հուսով եմ, որ կոլեգաներս հասկանում են տարբերությունը մարդու ներաշխարհի պատկերացումների և բարձրագույն նյարդային գործունեության ֆիզիոլոգիայի միջև» [17, էջ 104]:

Մեծագույն գիտնականների սխալները մեծագույն սխալներ են, դրանք ինքնուրույն ուսումնասիրման և վերլուծության կարիք ունեն: Բայց տվյալ պարագայում չի կարելի մեղադրել Պավլովին: Նա հանճարեղ զգում էր տարբերությունը սոմատիկ գործառույթների նյարդային կարգավորման և հոգեկան գործունեության միջև և փորձում էր դրան բացատրություն գտնել: Տեղեկատվական տեսությունն առաջացել է 1940-ական թվականներին, իսկ Պավլովը մահացել է 1936 թվականին: Եթե տեղեկատվության տեսությունն առավել շուտ ստեղծվեր, Պավլովը լրիվ այլ եզրակացություններ կաներ:

### **Եզրահանգում**

Կոլեգաներիս մի մասը, ծանոթանալով այս նյութին, գնահատեցին հոգեկանի ոչ նյութական տեսությունը, որպես բացահայտում, որը պետք է որակապես փոխի բոլոր մոտեցումները հոգեկանի և հոգեպաթոլոգիաների վերաբերյալ: Մյուս մասը, զգաց լիարժեք կոգնիտիվ դիսոնանս, քանի որ գաղափարներից շատերը հակասում էին նրան, ինչը նրանց սովորեցրել են ակադեմիական կրթության ընթացքում: Գիտնականների մեկ այլ խումբ հրաժարվում էր ընդհանրապես լսել և նույնիսկ քննարկել այդ տեսությունը, քանի որ այն հակասում էր համընդհանուր պատկերացումներին: Ջարմանալի է, բայց երիտասարդ ուսանողների և ասպիրանտների շրջանակներում հաճախ հնչում է հետևյալ միտքը. «Ի՞նչ է, կան մարդիկ ովքեր այլ կե՞րպ եմ մտածում»: Կարծում եմ, որ նոր տեսության աղեկվատ ընկալումը շուտ տեղի չի ունենա, չնայած նրան, որ բոլորը լավ գիտեն՝ որքան էլ ռադիոն քանդես, այնտեղ երաժշտություն չես գտնի:

### **Եզրակացություններ.** Հիմնավորված է.

1) շուրջ երկու հազար տարի գիտնականները չէին նկատում հասկացությունների սխալական կիրառությունը. նրանք ասում և գրում էին հոգեկանի ուսումնասիրման կամ թերապիայի մասին, սակայն ուսումնասիրում կամ «բուժում» էին ուղեղը, այդ թվում նաև՝ լոբոտոմիայի, էլեկտրաշոկի և հոգեֆարմակոլոգիայի միջոցով, զուգահեռ հորինելով պսևդո-ֆիզիոլոգիական եզրույթներ, որոնք նկարագրում էին հոգեկան գործընթացների ուղեղային մեխանիզմները;

2) ուղեղը և հոգեկանը՝ դրանք երկու փոխկապակցված, սակայն սկզբունքայնորեն տարբեր համակարգեր են;

3) ուղեղը և նյարդային համակարգը՝ նյութական են և իրականացնում են ներքին օրգանների գործունեության, ռեֆլեկտորային ռեակցիաների և օրգանիզմի հարմարողական գործառույթի կարգավորում;

4) հոգեկանը նյութական չէ, այն տեղեկատվական կառույց է, որը ձևավորվում է (ուղեղի լեզվական ծրագրավորման ճանապարհով) միայն սոցիալական տեղեկատվական միջավայրում և համարվում է ճանաչողական, հուզական, վարքային և իդիոմոտոր ակտերի կարգավորման բարձրագույն մակարդակ: Այսինքն՝ լեզվական և մշակութային պահանջներին համապատասխան անձի հոգեկանի ձևավորման սոցիալական հարմարումն ամբողջությամբ կախված է հոգեկանից:

5) նևրոտիկ և այլ հոգեկան խանգարումներ, որոնք առաջանում են անհատական հոգեկան տրավմաներից և «ճակատագրի հարվածներից» (ժամանակակից հոգեպաթոլոգիաներ 50%-ը), երբ մեկ տեղեկատվությունը (հոգեկան տրավմա) խանգարում է մեկ այլ՝ ուղեղի պաթոլոգիայի հետ չկապված տեղեկատվական համակարգի գործունեությունը (հոգեկանի);

6) այդպիսի հոգեկան խանգարումները պահանջում են որակապես այլ կլինիկական մոտեցումներ և թերապիա, վերականգնողական որակապես այլ պարադիգմաներ, որի նպատակն է ոչ թե ուղեղը, այլ՝ հոգեկանը;

7) ժամանակակից ակադեմիական գիտությունը, փաստացի, դեռևս չի ուսումնասիրել հոգեկանը՝ որպես տեղեկատվական (կատարյալ, ոչ նյութական) համակարգ, այդ պատճառով պահանջվում է մարդու մասին բոլոր գիտությունների պարադիգմաների կրկնակի դիտարկում:

### **Գրականություն**

1. **Анушвили А. Н.** Объективная психология на основе волновой модели мозга. – М.: Экон-Информ, 2008. – 292 с.
2. **Бехтерев В. М.** Будущее психиатрии: Введение в патологическую рефлексологию. – СПб.: Наука, 1997. – С. 23.
3. **Вернадский В. И.** Биосфера и ноосфера / Предисловие Р. К. Баландина. – М.: Айрис-пресс, 2004. — 576 с.

4. **Декарт Р.** Сочинения в 2 т.: Пер. с лат. и франц. Т. 1. - М.: Мысль, 1989. - 654 с.
5. **Винер Н.** Кибернетика или управление и связь в животном и машине. - М.: Советское радио, 1968. — 325 с.
6. **Вундт В.** Введение в психологию. - М.: КомКнига, 2007. - 168 с.
7. **Годфруа Ж.** Что такое психология: в 2-х т. Изд. 2-е, стереотипное. Т.1:Пер. с франц. - М.: Мир, 1996. - 496 с.
8. **Гримак Л. П.** Резервы человеческой психики. - М.: Ленанд, 1989. - 238 с.
9. **Губачев Ю. М., Стабровский Е. М.** Клинико-физиологические основы психосоматических соотношений. - Л.: Медицина, 1981. - 176 с.
10. **Данилова Н. Н., Крылова А. Л.** Физиология высшей нервной деятельности. - Ростов-на-Дону: «Феникс», 2005. - 478 с.
11. **Дубровский Д. И.** Проблема «сознание и мозг»: Теоретическое решение. - М.: «Канон+» РООИ «Реабилитация», 2015. - 208 с.
12. **Канеман Д.** Думай медленно... решай быстро. - М.: АСТ, 2013. - 625 с.
13. **Лакан Ж.** Функция и поле речи и языка в психоанализе. Доклад на Римском Конгрессе, прочитанный в Институте психологии Римского Университета 26 и 27 сентября 1953 года. - М.: Гнозис, 1995.
14. **Лубовский В. И.** Развитие словесной регуляции действий у детей (в норме и патологии). - М.: Педагогика, 1978. - 224 с.
15. **Лурия А. Р.** Маленькая книга о большой памяти. - М., 1968.
16. **Николлс Д., Мартин Р., Валлас Б., Фукс П.** От нейрона к мозгу. - М: УРРС: Книжный дом "Либерком", 2017. — С. 453-454.
17. **Павлов И. П.** Полное собрание трудов. Т. 1-5. - М.;-Л.: Академия наук СССР, 1949. - Т. III, кн. 1. -С. 323-340, Т.3. -С. 104, 349.
18. **Петровский В. А.** Психология неадаптивной активности. - М., 1992, с. 45.
19. **Решетников М. М.** Психическое расстройство. СПб.: Восточно-Европейский Института Психоанализа, 2008. - 272 с.
20. **Решетников М. М.** Критический постматериализм в психологии и психиатрии // Неврологический вестник, 2011. - Т. XLIII, Вып. 2. - С. 66-69.
21. **Решетников М. М.** Нематериальная теория психики. Журн. Форум молодых ученых, № 6 (22), 2018. -С. 1-7.
22. **Сеченов И. М.** Рефлексы головного мозга. - М.: АСТ, 2015. - 352 с.
23. **Сметанников П. Г.** Психиатрия. Краткое руководство для врачей (Изд. 2). - СПб.: СПб-МАПО, 1995. - 320 с.
24. **Фрейд З.** Исследование истерии. - СПб.: Восточно-Европейский Институт Психоанализа, 2005. - 454 с.
25. **Фрейд З.** Автопортрет. - СПб.: Восточно-Европейский Институт Психоанализа,, 2006. - 256 с.

26. **Энгельс Ф.** Роль труда в процессе превращения обезьяны в человека // Маркс К., Энгельс Ф. Сочинения. Т. 20. – М.: Политиздат, 1961. – 827 с.
27. **Laborit H.** Neurophysiologie: Aspects metaboliques et pharmacologiques - Paris, 1969.
28. **Lapin I. P., Oxenkrag G. F.** Intensification of the central serotonergic processes as a possible determinant of thymoleptic effect. – Lancet, 1969, N 1 p. 132-136.
29. **Reshetnikov M. M.** What is the Psyche? What are we Curing? Journ. Anthropology. Vol. 6, # 3 (2017). – P. 11-15.
30. **Reshetnikov M. M.** Problem of Relation Between Brain and Mind in Physiology, Medicine and Psychology. Journ. of Psychiatry and Psychiatric Disorders. 2017, # 1(6). Pp. 313-316.
31. **Reshetnikov M. M.** Non-Material Theory of the Psyche. - International Journal Psychiatric Research, 2018. Volume 1. Issue 1. Pp. 1-7.
32. **Rizzolatti, G., Fadiga, L., Gallese, V. and Fogassi, L.** "Premotor cortex and the recognition of motor actions" // Cognitive Brain Research, No. 3, 1996. – P. 131-141.
33. **Rizzolatti G., Fogassi L., Gallese V.:** Mirrors in the Mind. Scientific American Band 295, Nr. 5, November 2006, P. 30-37.
34. **Bartra R.** Society's Fascination With The Wild Outsider. The Artificial Savage: Modern Myths of the Wild Man. Michigan, 1997.
35. **Volkan V.** Traumatized Societies // In: Violence and Dialogue? Psychoanalytic Insight on Terror and Terrorism. – London, International Psychoanalytic Association, 2003. – Pp. 217-237.

## **МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПРЕДПОСЫЛКИ И ОСНОВАНИЯ НЕМАТЕРИАЛЬНОЙ ТЕОРИИ ПСИХИКИ**

*Решетников М. М. (Восточно-Европейский институт психоанализа, Санкт-Петербург, РФ)*

Проблема психики и сознания на протяжении двух последних тысячелетий остается одной из самых загадочных и все еще нерешенных. Сейчас уже мало кто вспоминает, что лишь Аристотель считал психику структурой, не принадлежащей к телу. Но эта идея имела очень короткую жизнь. Гиппократ похоронил ее и на все последующие столетия провозгласил, что вместилищем всех психических процессов является головной мозг. Даже такой гений как Рене Декарт поверил Гиппократу безоговорочно и потратил месяцы, пытаясь найти память и эмоции в извилинах и желудочках мозга. По этому же пути – поиску материальных структур психики пошли И.М. Сеченов, И.П. Павлов и многие другие. В последующем рождались, объявлялись новыми и

революционными, и умирали, не успев состариться, аналогичные ошибочные идеи. Но умирали не только идеи, но и пациенты, которых пытались лечить гипотетическими методами. Автором формулируется идея о мозге, как биологическом интерфейсе и обосновывается нематериальная теория психики, которая претендует на роль открытия и потребует смены ряда основных парадигм в науках о человеке.

**Ключевые слова:** *биологический интерфейс, информация, мозг, нервы, психика, психопатология, психофармакология, структуры мозга, структуры психики.*

## **METHODOLOGICAL BACKGROUND AND FOUNDATIONS OF THE NON-MATERIAL THEORY OF THE PSYCHE**

*Reshetnikov M. M. (East European Institute of Psychoanalysis, Saint Petersburg, RF)*

The problem of the psyche and consciousness has been the most mysterious one for a few thousand years and is still unresolved. It has been almost forgotten that Aristotle considered human psyche a structure that is not bound to the body. This idea did not persist, though. It was Hippocrates who ruined it and declared a different concept, which prevailed for many centuries, that the brain is a repository of all mental processes. Even such a genius as Rene Descartes took Hippocrates's idea for granted and spent many months in attempts to find memory and emotions in gyrus and ventricles of the brain. This path – the search of material structures of the psyche – was followed by I.M. Sechenov, I.P.Pavlov and many others. Later, many other mistaken ideas were born, declared new and revolutionary ones and died prematurely. However, not only ideas died, but also patients, who were treated by methods developed on the basis of these hypotheses. The author formulates the idea of the brain as the biological interface and proves a non-material theory of the psyche, which is a discovery that requires a change in basic paradigms of human sciences.

**Key words:** *biological interface, information, brain, nerves, psyche, psychopathology, psychopharmacology, brain structures, psyche structures.*